ԱՌԱՋԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ԱՎԱՂԱԿԸ ՀԱՅՈՑ ՄԵՋ

ՄԵՐԿԵ-ԿՈՒԼԱԲԻ ՏԵՐ-ՄՁՐԱԽ
1791—1792 թթ.

Պետք է տարբերել գաղափարական ավազակին ավազակ գաղափարականից։

Ավազակ գաղափարականը ձևանում է, թե ծառայում է գաղափարին, մինչդեռ իրոք սոսկ կողոպտիչ է։ Նա իդեալի դասալիքն է՝ վարագուրված կեղծ բարեմասնություններով, ծայրահեղ եսասեր ու հնարագետ ճիզվիտ՝ բազմապան կերպարանափոխություններով։

Գաղափարական ավազակն, ընդհակառակը, խանգարում է հասարակական անդորրությունը և ոտնատակ տալիս տիրող օրենքները գաղափարական նպատակով։ Այս տիպն իդեալի մարտիկն է, թեև կռվի ու բողոքի ժամանակակից ձևերին չի հետևում. սա գործում է լոկ այլասիրությունից դրդված և հանդես գալիս իբրև ասպետ առանց վարագուրվելու։

Ավազակ գաղափարականությունը հատուկ է բոլոր ժամանակներին. չի հնանում, այլ միշտ ժամանակակից է, հանդես է գալիս ամեն դարում, թեև տարբեր անուններով։ Մեր հասարակության պատմության վերջին տարիները, հատկապես համաշխարհային պատերազմի տարիներն ու մանավանդ Հայաստանի հանրապետության առաջին տարին ավազակ գաղափարականության ոսկեդար կարելի է համարել, ոսկեդար, երբ, ինչպես ասել է մեկը, «ումը ձեռք ձգեցինք, գող դուրս եկավ»։

Սրան հակառակ՝ գաղափարական ավազակությունն անցած երևույթ է և հատուկ չէ հասարակության զարգացման բոլոր աստիճաններին։ Գաղափարական ավազակը հանդես է գալիս այն շրջանում, երբ ժողովրդական ինքնագիտակցությունը քնած է, չկա կազմակերպված լայն պայքար հանուն ոտնահարված իրավունքի ու շահագործվող բազմության, չկան քաղաքական-հասարակական հոսանքներ ու կուսակցություններ։ Այս տիպը հնազանդության ծովի մեջ բողոքի ու ըմբոստության առաջին ու միայնակ ճիչն է։ Սա չի գտել